# ՄԱՍ I

# ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետության 2009 թվականի պետական բյուջեի նախագծում (այսուհետ սույն մասում՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 905.4 մլրդ դրամի չափով կամ 2008 թվականի համար հաստատված 773.9 մլրդ դրամ[1] և 2007 թվականին փաստացի ստացված[2] 636.8 մլրդ դրամ համադրելի մուտքերի համեմատությամբ համապատասխանաբար 17.0%-ով և 42.2%-ով ավելի: Սույն բացատրագրում ցուցանիշների համադրելիություն ապահովելու նպատակով ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի փաստացի ցուցանիշները ներկայացված են 2008 թվականից կիրառության մեջ մտած ՊՖՎ (GFS)-2001 նոր դասակարգման համաձայն:

Ակնկալվում է, որ 2009 թվականին պետական բյուջեի մուտքեր/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 21.7%՝ 2008 թվականի ծրագրային 21.1%-ի[3] և 2007 թվականի փաստացի 20.2%-ի դիմաց: 2009 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերն ու պետական տուրքերը՝ 80.2%, պարտադիր սոցիալական ապահովության վճարները՝ 14.2%, պաշտոնական դրամաշնորհները՝ 4.0%-ը, իսկ այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի 1.6%-ը:

ՀՀ 2009-2011թթ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (այսուհետ սույն մասում՝ ՄԺԾԾ) 2009 թվականի համար պետական բյուջեի եկամուտները նախատեսվել են 900.7 մլրդ դրամի չափով: Նա-

---

[1] Այստեղ և այսուհետ սույն մասում որպես 2008 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված և նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ և 11-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում ավելացված գումարների հանրագումարը, որը 01.09.08թ դրությամբ կազմել է 14.6 մլրդ դրամ:

[2] Համեմատվող ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով այստեղ և այսուհետ սույն մասում ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2007 թվականին փաստացի ստացված 39.7 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝

- «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2007 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով՝ 8.6 մլրդ դրամ եկամուտները (ԱԱՀ-ի գծով՝ 7.9 մլրդ դրամ, պետական տուրքերի գծով՝ 0.7 մլրդ դրամ):
- ՀՀ պետական կառավարման մարմինների 2007 թվականի արտաբյուջետային միջոցների եկամուտները, (որոնց գծով պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել) ընդամենը 11.8 մլրդ դրամ:
- «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչման դեպքում օրենքի համապատասխան կատարվող վճարների գծով փաստացի ստացված 0.3 մլրդ դրամը,
- Կապիտալի գործառնություններից ստացված 19.4 մլրդ դրամ եկամուտները, որոնք ըստ ՊՖՎ (GFS)-2001 նոր դասակարգման ոչ ֆինանսական ակտիվներից ստացված մուտքեր են և արտացոլվել են ծախսերի կազմում բացասական նշանով:

Բացի այդ, ներառված են պարտադիր սոցիալական ապահովության պարտադիր վճարների գծով փաստացի մուտքերը՝ 88.5 մլրդ դրամի չափով:

[3] Այստեղ և այսուհետ սույն մասում ՀՆԱ-ի նկատմամբ 2008 թվականի համար հաստատված ցուցանիշների հարաբերության հաշվարկներում օգտագործվել է 2008 թվականի ՀՆԱ-ի ներկայումս կանխատեսվող մեծությունը:

խագծով ծրագրված բյուջետային մուտքերը ՄԺԾԾ-ով նախատեսված համադրելի ցուցանիշների համեմատությամբ ըստ եկամուտների հիմնական խմբերի կրել են հետևյալ փոփոխությունները:

*Աղյուսակ 3.1. ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտների՝ ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող գումարները (մլրդ դրամ)*

| Եկամտատեսակը | ՄԺԾԾ-ով հաստատված | նախագծով առաջարկվող | տարբերություն (ՄԺԾԾ -Նախագիծ) |
|---|---|---|---|
| Ընդամենը եկամուտներ և պաշտոնական դրամաշնորհներ, այդ թվում՝ | 900.7 | 905.4 | -4.7 |
| Հարկային եկամուտներ և պետական տուրքեր | 725.3 | 726.0 | -0.7 |
| Պարտադիր սոցիալական ապահովության վճարներ | 128.4 | 128.4 | 0.0 |
| Պաշտոնական դրամաշնորհներ | 35.6 | 36.2 | -0.6 |
| Այլ եկամուտներ | 11.3 | 14.8 | -3.5 |

2009 թվականի համար ՄԺԾԾ-ով հաստատված և Նախագծով առաջարկվող եկամուտների տարբերությունների հիմնավորումները ներկայացված են ստորև՝ եկամուտների հիմնական խմբերի նկարագրությանը վերաբերվող սույն բացատրագրի առանձին բաժիններում:

## 1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2009 թվականի համար Նախագծում ծրագրվել են 726.0 մլրդ դրամի չափով կամ ընթացիկ տարվա համար հաստատված[4] և 2007 թվականի փաստացի[5] մուտքերից համապատասխանաբար 101.2 մլրդ դրամով և 225.3 մլրդ դրամով ավելի:

Նախագծով նախատեսված հարկային եկամուտները և պետական տուրքերը համապատասխանում են ՄԺԾԾ-ով 2009 թվականի համար ծրագրված համապատասխան ցուցանիշի նույն մակարդակին:

Հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են ՀՆԱ-ի 17.4%-ի չափով՝ 2008 թվականի ծրագրային 17.0%-ի և 2007 թվականի փաստացի համադրելի 15.9%-ի դիմաց:

2009 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես հիմք են ընդունվել հետևյալ մակրոտնտեսական ցուցանիշները

[4] «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հարկային եկամուտների գծով հաստատված մուտքերից բացի ներառված է նաև նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում 01.09.08թ դրությամբ կատարված 14.4 մլրդ դրամի չափով ավելացումները:

[5] Առանց ՀՀ 2006 թվականի պետական բյուջեից կատարված՝ սույն մասի տողատակի 2-րդ ծանոթության մեջ նշված այն եկամուտների, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում:

| Ցուցանիշներ | 2008 | 2009 |
|---|---|---|
| Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ) | 3,672.0 | 4,169.0 |
| ՀՆԱ-ի իրական աճ | 113.8% | 110.4% |
| ՀՆԱ-ի դեֆլյատոր | 5.6% | 4.0% |
| 1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը դրամով | 305.0 | 302.4 |
| Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար) | -3,636.0 | -4,363.3 |
| Ապրանքների ներմուծման աճի տեմպը | 30.0% | 20.0% |

Ինչպես և նախորդ տարիներին, 2009 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների (գործոն 1), վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի (գործոն 2), ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձման գումարների (գործոն 3):

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա 2009 թվականի համար ծրագրվել են 693.4 մլրդ դրամի չափով հարկային եկամուտներ և պետական տուրք:

Վարչարարական միջոցառումների իրականացումից 2009 թվականին ակնկալվում է հավաքագրել 6.6 մլրդ դրամ: Պետական բյուջեի հարկային եկամուտների հավաքագրումն ապահովող հիմնական միջոցառումների ծրագիրը ներկայացված է ՄԺԾԾ-ում:

Նպատակ ունենալով կանոնակարգել ավելացված արժեքի հարկի գերավճարների գումարների վերադարձի գործընթացը և ուժեղացնել դրա նկատմամբ վերահսկողությունը, արդեն 2-րդ տարին է պետական բյուջեի ծախսերի կազմում նախատեսվում են հատկացումներ, որոնք կուղղվեն պետական բյուջեից վերադարձման ենթակա ավելացված արժեքի հարկի գումարների տրամադրմանը նման գերավճարներ ունեցող համապատասխան հարկատուներին: Հարկ է նշել, որ մինչև 2008 թվականը այս գումարները վերադարձվում էին միայն ավելացված արժեքի հարկի գծով ընթացիկ մուտքերի հաշվին: Այդ իսկ պատճառով այս գործոնի ազդեցությամբ 2009 թվականի համար ավելացված արժեքի հարկի գծով ծրագրվել են 26.0 մլրդ դրամի չափով լրացուցիչ մուտքեր (ՄԺԾԾ-ով նախատեսված էր 22.0 մլրդ դրամ):

Հարկ է նշել, որ նախագծով ավելացված արժեքի հարկի վերադարձի գծով 26.0 մլրդ դրամի նախատեսումը չի նշանակում, որ գերավճարների վերադարձը այդ տարում սահմանափակվելու է նշված գումարով: Ավելացված արժեքի հարկի գերավճարների վերադարձի գումարները 2009 թվականին կարող են նաև գերազանցել 26.0 մլրդ դրամը: Այս դեպքում մինչև 26.0 մլրդ դրամը գումարները կվերադարձվեն պետական բյուջեի ծախսերի կազմում նախատեսված գումարի հաշվին, իսկ այս գումարը գերազանցող մասը՝ հարկային օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ավելացված արժեքի հարկի գծով ընթացիկ փաստացի մուտքերի հաշվին: Ընդհանուր առմամբ, հարկային պարտավորություններից ավելի վճարված գումարների՝ պետական բյուջեից վերադարձման մեխանիզմների կատարելագործումը, ինչպես նաև նոր գերավճարների և ապառքների առաջացման կանխարգելումը առաջիկա տարիների հարկային քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է:

Այսպիսով, 2009 թվականի համար հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով ծրագրված 726.0 մլրդ դրամից 693.4 մլրդ դրամը նախատեսվել է ըստ 1-ին գործոնի, 6.6 մլրդ դրամը՝ ըստ 2-

րդ գործոնի, իսկ 26.0 մլրդ դրամը՝ պետական բյուջեից ֆինանսավորվող ավելացված արժեքի հարկի վերադարձի գծով պետական բյուջեում ծախսեր նախատեսելու ազդեցությամբ (գործոն 3):

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված՝ 2009 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 693.4 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականներին, որոնք կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների, 2001-2007 թվականների տարեկան փաստացի մուտքերի և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2009 թվականի հարկային եկամուտները կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդների համաձայն:

### 1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 328.4 մլրդ դրամի չափով, որը 98.5 մլրդ դրամով գերազանցում է 2007 թվականի փաստացի մուտքերը:

Ավելացված արժեքի հարկի գծով ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի նշված մուտքերը ներառում են հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող գումարները, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների կազմում ընդգրկված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները (4.2 մլրդ դրամ կամ ԱԱՀ-ի ընդհանուր մուտքերի 1.3%-ը): Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Ներքին շրջանառությունից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են մնացորդային եղանակով, որպես սպառումից և ապրանքների ներմուծումից գանձման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերություն:

Սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան[6]: Դրա համար վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և հանրային սնունդ) ստեղծված ավելացված արժեքը ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են նաև մակրոկանխատեսումների համաձայն 2009 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով: Հաջորդ նվազեցումը կատարվել է բենզինի, դիզվառելիքի և ծխախոտի սպառման հաշվարկային գումարի չափով, քանի որ առաջին երկու ապրանքատեսակների իրացումն ազատված է

[6] Այսուհետ՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է ՀՆԱ-ի, կամ ներմուծման՝ տվյալ հարկատեսակի համար հարկունակ մասը:

ԱԱՀ-ից, իսկ ծխախոտի համար սահմանված է հաստատագրված վճար: Բացի նշված նվազեցումներից, ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

2009 թվականին սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն հաշվարկվել է՝ գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով նախորդ տարվա փաստացի դրույքաչափը[7]:

Ներմուծումից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսելիս դիտարկվել է ապրանքների ներմուծումը: Դրա համար 2009 թվականի ներմուծման ծավալը նվազեցվել է թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի[8], հանքահումքային մթերքների[9], ներմուծվող ծխախոտի[10] կանխատեսումային մաքսային արժեքների հանրագումարի չափով: Դրա հետ մեկտեղ ներմուծումից գանձվող ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ապրանքների ներմուծումից գանձվող մաքսատուրքի և ակցիզային հարկի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում: Այս եղանակով գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով նախորդ տարվա փաստացի դրույքաչափը, կանխատեսվել են 2009 թվականին ներմուծումից գանձվելիք ԱԱՀ-ն:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2009 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարին ավելացնելով ծխախոտի համար գանձվող հաստատագրված վճարների կազմում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, ստացվում են 2009 թվականի ծրագրային մուտքերը ԱԱՀ-ից:

### 1.2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ ծխախոտի արտադրանքի, ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի հաստատագրված վճարների 2009 թվականի համար ծրագրվել է 51.3 մլրդ դրամի չափով մուտքեր:

2009 թվականին ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի միջին ամսական ծավալները՝ նախորդ տարիների և ընթացիկ տարվա հունվար-հունիս ամիսների փաստացի տվյալների հիման վրա: Ծխախոտի արտադրման/իրացման և ներմուծման 2008 թվականի ֆիզիկական ծավալների համապատասխան սպասողական ցուցանիշների նկատմամբ կիրառելով 17 և ավելի տարիք ունեցող բնակչության թվաքանակի՝ վիճակագրական վերջին տվյալների հիման վրա հաշվարկված 2007 թվականի նկատմամբ 2008 թվականին գրանցված (տարեսկզբի դրությամբ) տարեկան աճը՝ 2.5%-ը, գնահատվել են 2009 թվականի համապատասխան ցուցանիշները:

---

[7] Փաստացի կամ հաշվարկային մուտքերի հարաբերությունը փաստացի բազային:
[8] Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի ապրանքախմբում մեծ տեսակարար կշիռ է կազմում վերամշակման և հետագայում արտահանման նպատակով ադամանդե քարերի ներմուծումը, որը ԱԱՀ-ով չի հարկվում:
[9] Հանքահումքային մթերքների հիմնական մասը ԱԱՀ-ով չի հարկվում:
[10] Հարկվում է հաստատագրված վճարով:

ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար հաստատագրված վճարներն, ինչպես և նախորդ դեպքում, գնահատվել են ըստ ներմուծման միջին ամսական ծավալների կանխատեսումների, որն իր հերթին կատարվել է որոշակի ենթադրությունների հիման վրա: Առաջին ենթադրությունը վերաբերվում է 2009 թվականին ՀՀ-ում գրանցված, շահագործվող այն տրանսպորտային միջոցների քանակին, որոնք օգտագործում են բենզին կամ դիզվառելիք: Հաջորդ ենթադրությունը վերաբերվում է 2009 թվականին 1 մեքենայի վառելիքի օրական ծախսին: Նշված ենթադրությունների համար հիմք են հանդիսացել 2004-2007 թվականների փաստացի ցուցանիշները:

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի հաստատագրված վճարների հաշվարկային գումարները ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

## 1.3. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2008 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 59.9 մլրդ դրամի չափով, որը 8.2 մլրդ դրամով ավելի է 2007 թվականի փաստացի մուտքերից:

2009 թվականի կանխատեսվող գումարը ներառում է նաև ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի համար հաստատագրված վճարներում ներառված ակցիզային հարկի հաշվարկային գումարը՝ 45.8 մլրդ դրամը, որը կազմում է ակցիզային հարկի գծով մուտքերի 76.5%-ը:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների: Հարկման ընդհանուր ռեժիմով 2009 թվականին գանձվելիք ակցիզային հարկի գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից:

Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ակցիզային հարկի 2009 թվականի տարեկան մուտքերը ներքին շրջանառությունից և ներմուծումից կանխատեսելիս հաշվի են առնվել 2009 թվականի համար կանխատեսվող սպառման և ապրանքների ներմուծման իրական աճի տեմպերը (9.8% և 20.0%) գանձվող հարկի կանխատեսումներում:

## 1.4. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մուտքերը շահութահարկի գծով կանխատեսվել են 116.4 մլրդ դրամի չափով, որը 40.9 մլրդ դրամով գերազանցում է 2007 թվականի փաստացի մուտքերի գումարը:

Շահութահարկից բյուջետային եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և հանրային սնունդ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է ենթակա շահութահարկով հարկման, տնտեսության զուտ շահույթը ճշգրտվել (նվազեցվել) է նշված ճյուղերի՝ շահութահարկով չհարկվող զուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Շահութահարկի

գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 2008 թվականի բազայի և դրույքաչափի հիման վրա (հաշվարկված ըստ 2007 թվականի փաստացի բազայի և 2008 թվականի սպասողական մուտքերի):

### 1.5. ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

Եկամտահարկի գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 65.9 մլրդ դրամի չափով, որը 19.1 մլրդ դրամով կգերազանցի 2007 թվականի փաստացի մուտքերը: Հաշվարկները կատարված են ըստ եկամտի ստացման հիմնական աղբյուրների:

Աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի կանխատեսումներում, ինչպես և շահութահարկի դեպքում, մակրոտնտեսական ցուցանիշների հիման վրա գնահատվել է հարկման փաստացի բազան: Դրա համար դիտարկվել է ՀՆԱ-ի կառուցվածքը, մասնավորապես՝ ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» հոդվածը: Հետագա հաշվարկներում այս ցուցանիշը նվազեցվել է տնտեսության մեջ զբաղվածների կանխատեսվող թվաքանակին համապատասխան չհարկվող նվազագույն աշխատավարձի (25000 դրամ) և վարձու աշխատողների կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների (աշխատավարձի 3%-ը) հանրագումարի չափով:

Ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներից գանձվող (ձեռնարկատիրական գործունեություն, ավանդներ և այլն) եկամտահարկի հաշվարկները կատարված են փաստացի դրույքաչափի մեթոդի կիրառմամբ և հիմնված են ֆինանսական համակարգից, ձեռնարկատիրական գործունեությունից և այլ աղբյուրներից բնակչության դրամական եկամուտների վերաբերյալ վիճակագրական ցուցանիշի վրա:

### 1.6. ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2009 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 44.8 մլրդ դրամի չափով, որը 20.7 մլրդ դրամով գերազանցում է 2007 թվականի փաստացի մուտքերի մակարդակը:

2009 թվականի մաքսատուրքի կանխատեսվող գումարը ներառում է ՀՀ ներմուծվող ծխախոտի համար հաստատագրված վճարում ներառված մաքսատուրքի հաշվարկային գումարը 1.3 մլրդ դրամի չափով:

Այս հարկատեսակի դեպքում ևս հաշվարկները կատարվել են հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների համար առանձին: Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվելիք գումարները կանխատեսվել են մաքսատուրքի փաստացի բազայի գնահատականի հիման վրա, որի առանձին տարրերի հաշվարկման մեթոդը ներկայացված է սույն բացատրագրի՝ ներմուծումից գանձվող ավելացված արժեքի հարկին վերաբերվող համապատասխան բաժնում:

### 1.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2009 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 21.5 մլրդ դրամի չափով, որը 3.6 մլրդ դրամով գերազանցում է 2007 թվականի փաստացի մուտքերը:

2009 թվականի մուտքերը հաշվարկել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2009 թվականին առևտրի և ծառայությունների ոլորտներում (8.6%) ակնկալվող տնտեսական աճի (իրական աճի) ցուցանիշը, ինչպես նաև համապատասխան վճարների գծով մուտքերի 2007, 2008 թվականի հարկային սահմանության գործակցների[11] միջինացված մեծությունը:

## 1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մուտքերը բնապահպանական և բնօգտագործման, ճանապարհային վճարների գծով կանխատեսվել են 16.2 մլրդ դրամի չափով՝ 2007 թվականի փաստացի տարեկան ցուցանիշից 4.0 մլրդ դրամով ավելի:

2009 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով 2002-2008թթ փաստացի/սպասողական մուտքերը, ՀՆԱ-ի արդյունաբերության ճյուղի 2009 թվականին ակնկալվող տնտեսական աճի՝ 10.2%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 20.0%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

## 1.9. ՊԱՐԶԵՑՎԱԾ ՀԱՐԿ

Պարզեցված հարկի գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 7.8 մլրդ դրամի չափով՝ 2007 թվականի փաստացի տարեկան ցուցանիշից 2.2 մլրդ դրամով պակաս: Այս հարկատեսակի գծով մուտքերի ակնկալվող նվազումը հիմնականում պայմանավորված է 2008 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությամբ, որի արդյունքում էականորեն կրճատվեց պարզեցված հարկ վճարողների շրջանակը:

Պարզեցված հարկի գծով 2009 թվականի մուտքերի կանխատեսումները կատարված են ըստ օրենքով սահմանված գործունեության 3 հիմնական ոլորտների՝ առևտրի, նոտարական գործունեության և այլ ոլորտների, հաշվի առնելով 2009 թվականին առևտրի ոլորտի (12.9%) և ՀՆԱ-ի անվանական աճի (13.5%) ցուցանիշները:

## 1.10. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ[12]

Այլ հարկային եկամուտների գծով 2009 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 8.8 մլրդ դրամի չափով:

---

[11] ՀՆԱ-ի տվյալ ճյուղի 1 տոկոս աճին համապատասխանող հարկի (համապատասխան ոլորտից) տոկոսային աճը:

[12] Ներառում է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարները, մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները, ուսումնասիրության կամ արդյունահանման լիցենզառուի, ինչպես նաև ուսումնասիրության և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի կողմից վճարվող կոնցեսիոն վճարը, այլ հարկային եկամուտները, պետական բյուջե վճարման ենթակա հողի հարկն ու գույքահարկը:

## 1.11. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերից 2009 թվականի բյուջետային մուտքերը Նախագծով ծրագրվել են 23.8 մլրդ դրամի չափով՝ 2008 թվականի համար հաստատված 22.0 մլրդ դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 20.8 մլրդ դրամի[13] դիմաց (համապատասխանաբար 1.7 մլրդ դրամով և 2.9 մլրդ դրամով ավելի):

Պետական տուրքերի գծով 2009 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ 1998-2008 թվականների փաստացի հավաքագրումների միտումների՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները: Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2009 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ինչպես նաև ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը գնահատվել են 429.0 մլն դրամ, որը համապատասխանաբար 6.6 մլն դրամով և 45.5 մլն դրամով գերազանցում է 2008 թվականի համար հաստատված և 2007 թվականի փաստացի մակարդակները:

2009 թվականի մուտքերը գնահատվել են ըստ 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի, 2004-2007 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների, ինչպես նաև 2000-2007 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշների:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 9.4 մլն դրամի չափով, 2008 թվականի համար հաստատված 7.6 մլն դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 11.1 մլն դրամի դիմաց:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,392.2 մլն դրամի չափով՝ 2008 թվականի համար հաստատված 2,308.4 մլն դրամի և 2007 թվականի փաստացի ստացված 1,914.1 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք է ընդունվել պետական տուրքի այս տեսակի գծով 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004-2007 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների, ինչպես նաև 2000-2007 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 4,491.2 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 743.9 մլն դրամով, իսկ 2007

---

[13] Տվյալների համադրելիությունն ապահովելու նպատակով 2007 թվականի փաստացիում ներառված չեն «ՀՀ 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2007 թվականի պետական բյուջեից 717.4 մլն դրամի չափով ֆինանսավորված բյուջետային մուտքերը՝ հիմնականում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից հայցադիմումներ, դատարանի վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքներ ներկայացնելիս վճարվող պետական տուրքի գծով:

թվականին փաստացի ստացված ցուցանիշից պակաս է 69.9 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբի գծով 2007 թվականի փաստացիի նկատմամբ 2009 թվականի ծրագրային ցուցանիշի նվազումը պայմանավորված է օրենսդրական փոփոխությամբ, որի արդյունքում մասնավորապես ավտոմեքենաների տեխնիկական զննությունը 2008 թվականի հունվարից ճանապարհային ոստիկանության մարմինների կողմից չի անցկացվում և հետևաբար համապատասխան փաստաթուղթ տալու համար պետական տուրք չի գանձվում:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 3,520.4 մլն դրամը կամ 78.4 %-ը 2009 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 4 խմբերի հաշվին՝

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են 1,456.3 մլն դրամի (պետական գրանցումից 2009 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 32.4 %-ը) չափով, որը 2008 թվականի հաստատված և 2007 թվականին փաստացի ստացված ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 372.5 մլն դրամով և 448.6 մլն դրամով:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են, ելնելով դրանց գծով 2008 թվականի սպասողական ցուցանիշից և 2005-2007 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշից:

- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են 661.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2009 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 14.7%-ը), 2008 թվականի հաստատված 530.5 մլն դրամի և 2007 թվականի փաստացի ստացված 475.4 մլն դրամի դիմաց:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են, հաշվի առնելով 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004-2007 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների և 2005-2007 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 1,255.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2009 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 27.9%-ը), 2008 թվականի համար հաստատված և 2007 թվականին փաստացի ստացված 1,232.6 մլն դրամի և 1,103.6 մլն դրամի դիմաց:

  2009 թվականի մուտքերը գնահատվել են ըստ 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի, 2000-2007 թվականների առաջին 7 ամիսների մուտքերի՝ տարեկան համապատասխան գումարում ունեցած տեսակարար կշիռների, ինչպես նաև 2002-2008 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշների:

- պետական ռեգիստրում գրանցման ենթակա տնտեսվարող սուբյեկտներից գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են 148.1 մլն դրամի (պետական գրանցումից 2009 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 3.3 %-ը) չափով, որը 2008 թվականի հաստատված ցուցանիշից պակաս է 2.8 մլն դրամով, իսկ 2007 թվականի փաստացի ցուցանիշից ավելի է 3.1 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են, հաշվի առնելով 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004-2006 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների, ինչպես նաև 2004-2008 թվականների տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշները:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը ծրագրվել են 2008 թվականի համար հաստատված 1.8 մլն դրամի չափով:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 296.0 մլն դրամի չափով, որը 53.9 մլն դրամով պակաս է 2008 թվականի համար հաստատված ցուցանիշից և 13.1 մլն դրամով գերազանցում է 2007 թվականի փաստացի ցուցանիշը:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,118.0 մլն դրամի չափով՝ 2008 թվականի համար հաստատված 2,719.0 մլն դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 2,480.4 մլն դրամի դիմաց:

Կանխատեսումներն իրականացվել են, հաշվի առնելով 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2007 թվականի տարեկան փաստացի մուտքերում առաջին 7 ամիսների տեսակարար կշռի և 2006-2007թթ տարեկան աճի տեմպի ցուցանիշները:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 4, 323.7 մլն դրամի չափով, որը 2008 թվականի համար հաստատված և 2007 թվականին փաստացի ստացված մուտքերը գերազանցում է համապատասխանաբար 508.4 մլն դրամով և 796.2 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբից 2009 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 3,531.5 մլն դրամը կամ 81.7 %-ը նախատեսվում է ապահովել էներգետիկայի, շահումով խաղերի և վիճակախաղերի, առողջապահության, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, քաղաքաշինության բնագավառներում և սննդամթերքի արտադրության համար տնտեսվարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի գումարների հաշվին: Կանխատեսումներն իրականացվել են, ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված անհրաժեշտ քանակական տվյալներից, 2007 թվականի փաստացի և 2008 թվականի սպասողական մուտքերից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 8,681.7 մլն դրամի չափով, որը 2008 թվականի համար հաստատված և 2007 թվականին փաստացի ստացված մուտքերը գերազանցում է համապատասխանաբար 9.4 մլն դրամով և 1,009.5 մլն դրամով:

Նշված պետական տուրքերից 2009 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 8,129.2 մլն դրամը (92.4 %), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 2 տեսակների հաշվին՝

- ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրքի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 7,419.0 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 85.5 %-ը) չափով, որը 2008 թվականի հաստատված ցուցանիշից պակաս է 363.2 մլն դրամով, իսկ 2007 թվականին փաստացի ստացված ցուցանիշը գերազանցում է 887.2 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի մուտքերը գնահատվել են, հաշվի առնելով 2008 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004-2007 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը, ինչպես նաև 2004-2006թթ տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշը:

- վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների և օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2009 թվականի մուտքերը կանխատեսվել են 607.2 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2008 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 7.0 %-ը) չափով՝ 2008 թվականի համար հաստատված և 2007 թվականին փաստացի ստացված 539.6 մլն դրամի և 511.7 մլն դրամի դիմաց:

## II ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

2009 թվականի Նախագծով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով պետական բյուջեի մուտքերը գնահատվել են ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարված կանխատեսումների չափով՝ 128.4 մլրդ դրամ, 2008 թվականին հաստատված 104.9 մլրդ դրամի և 2007 թվականի փաստացի ստացված 88.5 մլրդ դրամի դիմաց:

Այս եկամտատեսակի գծով 2009 թվականի ծրագրային ցուցանիշը կազմում է ՀՆԱ-ի 3.08 %-ը՝ 2008 թվականի համապատասխան ցուցանիշի 2.98 %-ի դիմաց:

## III ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2009 թվականին ակնկալվում է ստանալ 36.2 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ:

Պաշտոնական դրամաշնորհների գծով ՄԺԾԾ-ով նախատեսված 35.6 մլրդ դրամի և Նախագծով առաջարկվող 36.2 մլրդ դրամ գումարների միջև 0.6 մլրդ դրամ տարբերությունը պայմանավորված է ինչպես դրամաշնորհների կառուցվածքի, այնպես էլ հաշվարկների հիմքում դրված 1 եվրոյի և 1 ԱՄՆ դոլարի դրամային փոխարժեքի փոփոխություններով (նշված ցուցանիշները ՄԺԾԾ-ի հաշվարկներում կազմել են համապատասխանաբար 306.82 և 476.86 դրամ, Նախագծում՝ 302.44 և 442.89 դրամ):

Մասնավորապես, 2009 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

- Եվրոպական հանձնաժողովից Եվրոպական համագործակցության քաղաքականության դրամաշնորհ՝ 6.6 մլրդ դրամ,
- ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող Լոռու, Շիրակի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման դրամաշնորհային ծրագիրի շրջանակներում՝1.7 մլրդ դրամ,
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 1.4 մլրդ դրամ,
- Ասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ջրամատակարարման և ջրահեռացման ծրագրի շրջանակներում՝ 1.7 մլրդ դրամ,
- Միջազգային ֆինանսական կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների կողմից հատկացվող այլ նպատակային դրամաշնորհների գծով՝ 24.8 մլրդ դրամ, որից «Հազարամյակի մարտահրավեր» հիմնադրամից՝ 21.5 մլրդ դրամ:

## IV ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2009 թվականի համար ծրագրվել են 14.8 մլրդ դրամի չափով՝ 2008 թվականի հաստատված 9.0 մլրդ դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 23.5 մլրդ դրամի[14] դիմաց:

ՄԺԾԾ-ով այլ եկամուտների գծով 2009 թվականի համար նախատեսվել է 11.3 մլրդ դրամ: ՄԺԾԾ-ի շրջանակներում կատարվածի նկատմամբ Նախագծի կանխատեսումների փոփոխությունը հիմնականում պայմանավորված է կենտրոնական բանկում ավանդադրվող ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցների դիմաց վճարվող տոկոսավճարների գծով ծրագրված մուտքերով (նախագծով նախատեսվել է 3 մլրդ դրամով ավելի, քան ՄԺԾԾ-ով), հաշվարկների հիմքում դրված ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի հավաքագրումների միտումներով, ինչպես նաև 1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան դրամային փոխարժեքի փոփոխությամբ (ՄԺԾԾ-ում կիրառված

[14] Առանց պետական հիմնարկների համար ՀՀ կառավարության ընդունած որոշումների համաձայն բացված արտաբյուջետային հաշիվների միջոցների շրջանառության՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության 2007 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ կետի:
Բացի այդ, տվյալների համադրելիությունն ըստ GFS 2001 դասակարգիչի ապահովելու նպատակով, 2007 թվականին ռոյալթիների և կոնցեսիոն վճարների գծով փաստացի ստացված 5.0 մլրդ դրամը չի ներառվել այլ եկամուտների կազմում:

306.82 դրամի դիմաց Նախագծում նվազել է մինչև 302.44 դրամ): Արդյունքում, ՄԺԾԾ-ի շրջանակներում ծրագրվածի նկատմամբ այլ եկամուտների գծով Նախագծով նախատեսվել է 3.5 մլրդ դրամի չափով ավելի մուտքեր:

Այլ եկամուտների գծով 2009 թվականի համար ծրագրված տարեկան մուտքերը գերազանցում են 2008 թվականի հաստատված ծրագիրը 5.8 մլրդ դրամով, սակայն 8.7 մլրդ դրամով պակաս են 2007 թվականի փաստացի ցուցանիշից: 2007 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ 2009 թվականի ծրագրային ցուցանիշի նվազումը հիմնականում պայմանավորված է.

1. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից մուտքերով: Այս գծով 2009 թվականի կանխատեսումային ցուցանիշը զիջում է 2007 թվականի փաստացիին 0.9 մլրդ դրամով՝ պայմանավորված կանխատեսումների հիմքում դրված՝ պայմանագրային հարաբերություններով կարգավորվող ցուցանիշներով:

2. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային գործարան» ՓԲԸ-ի մասնավորեցման գործընթացում գնորդներից ստացվելիք բացառիկ բանակցությունների վարման իրավունքի դիմաց 2007 թվականին փաստացի 6.9 մլրդ դրամի ստացմամբ, որը 2009 թվականից չի ստացվելու:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2009 թվականին վճարման ենթակա գումարները ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի մուտքերը: Ստորև ներկայացվում են 2009 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2008 թվականի հաստատված, 2007 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, ինչպես նաև կատարված հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2009 թվականի համար կանխատեսվում են շուրջ 846.5 մլն դրամի չափով, որից՝

1.1 պետական ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների գծով՝ 721.2 մլն դրամ, 2008 թվականի հաստատված 698.2 մլն դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 383.3 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2008, 2009 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների և վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային մուտքերի գծով գանձապետական տվյալները:

1.2 համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի ֆոնդի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց վճարվող վարձավճարները ծրագրվել են 125.3 մլն դրամի չափով՝ 2008 թվականի հաստատված 70.5 մլն դրամի և 2007 թվականին փաստացի ստացված

71.5 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հաշվի են առնվել 2008-2009 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) հողատարածքների մակերեսների, վճարված վարձավճարների վերաբերյալ (ըստ առանձին հողատեսքերի՝ վարելահող, արոտավայր, խոտհարք և այլ հողատեսքեր) ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև համապատասխան գանձապետական տվյալները: Հաշվի առնելով ընթացիկ տարվա փաստացի մուտքերը, առաջին անգամ մուտքեր են ծրագրվել պետական անտառների և անտառային հողերի օգտագործման և վարձակալության գծով՝ 28.1 մլն դրամի չափով:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2009 թվականին ակնկալվում են 3,775.0 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 3,400.0 մլն դրամ՝ 2008 թվականին հաստատված 350.0 մլն դրամի և 2007 թվականի փաստացի ստացված 4,322.0 մլն դրամի դիմաց: 2009 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց վճարվելիք տոկոսավճարների:

2.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2009 թվականին ակնկալվում են 375.0 մլն դրամի չափով մուտքեր՝ 2008 թվականի համար ծրագրված 370.0 մլն դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 1,754.6 մլն դրամի դիմաց: Այս եկամտատեսակի գծով 2009 թվականի համար ակնկալվող մուտքերի նվազումը 2007 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ պայմանավորված է 2007 թվականին մեկանգամյա գումարների ստացմամբ:

Շահաբաժինների գծով 2009 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

ա) ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N 1194 որոշմամբ պետական մասնակցության դիմաց պետական բյուջե կատարվելիք շահույթից մասհանումների 20%-ի չափով սահմանումը և մինչև 3 մլն դրամ զուտ շահույթ ապահոված 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ազատումը ՀՀ պետական բյուջե շահաբաժին վճարելուց,

բ) մասնավորեցված ընկերությունների կողմից ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ամրագրված շահաբաժինների գծով առկա պարտքերի մարման հնարավորությունը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2009 թվականին կանխատեսվում են 367.3 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2009 թվականին ակնկալվում է ստանալ 208.5 մլն դրամ: Ծրագրային մուտքերի բաշխվածքն ըստ առանձին վարկային ծրագրերի հետևյալն է.

ա) Համաշխարհային Բանկի օժանդակությամբ իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրով ՀՀ բանկերին (Արդշինինվեստբանկ, Հայգյուղփոխբանկ, Կոնվերս բանկ) առ 01.01.2008թ. տրամադրվել է 2,900.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկ, (տարեկան 6.5%, LIBOR և LIBOR+1 տոկոսադրույքներով), որի օգտագործման դիմաց ՀՀ 2009 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 156.0 հազ. ԱՄՆ դոլար կամ 47.2 մլն դրամ (1 ԱՄՆ դոլար= 302.44 դրամ) տոկոսավճար:

բ) «Հյուսիս-արևմտյան շրջանների գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի» շրջանակներում (համաձայն 1998 թվականի հունվարի 13-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի» Հոդված 2.02-ի) Հայգյուղփոխբանկին առ 01.01.2008 թվականը տրամադրվել է 1,633.6 հազ. ԱՄՆ դոլարի չափով նպատակային վարկ: Դրա դիմաց տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 97.0 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 29.3 մլն դրամի չափով տոկոսավճար:

գ) Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում (համաձայն 2002 թվականի հունվարի 11-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի») առ 01.01.2008 թվականը Հայգյուղփոխբանկին տրամադրվել է 2,828.0 հազ. ԱՄՆ դոլար վարկ: Դրա դիմաց առ 01.01.2008թ տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 169.4 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 51.2 մլն դրամի չափով տոկոսավճար:

դ) Ձեռնարկությունների զարգացման ծրագրի շրջանակներում ՀՀ բանկերին (Արդշինինվեստբանկ, Անելիք բանկ, Կոնվերս բանկ, Ինեկոբանկ) տրամադրված նպատակային վարկերի ընդհանուր գումարը կազմում է շուրջ 4,169.7 հազ. ԱՄՆ դոլար (LIBOR+2 տոկոսադրույքով), որի օգտագործման դիմաց ՀՀ 2009 թվականին պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 228.5 հազ. ԱՄՆ դոլար կամ շուրջ 69.1 մլն դրամ:

ե) ՀՀ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգի ամրապնդման ծրագիրն իրականացնելու նպատակով համաձայն 2005 թվականի հուլիսի 8-ին KfW-ի (Կրեդիտանշտալդ Ֆյուր Վիդերաուֆբաու) և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջև կնքված պայմանագրի, KfW-ն տրամադրել է 3,500.0 հազ. Եվրո գումարի վարկ, որի օգտագործման դիմաց ՀՀ 2009 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 26.3 հազ. Եվրո կամ շուրջ 11.6 մլն դրամ (1 Եվրո = 442.89 դրամ) տոկոսավճար:

3.2 ՀՀ ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2009 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 525.3 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 158.9 մլն դրամ:

4. Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի եկամուտները գնահատվել են ընթացիկ տարվա սպասողականի չափով՝ 21.4 մլն դրամ:

5. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2009 թվականի մուտքերը ծրագրվել են 2,292.0 մլն դրամի չափով՝ 2008 թվականի համար ծրագրված 1,941.9 մլն դրամի և 2007 թվականին փաստացի ստացված 1,776.1 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ գանձող մարմինների՝ հաշվի առնելով տվյալ մարմնի կողմից կիրառվող պատժամիջոցների գծով ընթացիկ տարվա առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2006-2007 թվականների նույն ժամանակահատվածի մուտքերի՝ համապատասխան տարեկան գումարում ունեցած միջին տեսակարար կշռի և 2009 թվականին ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշները:

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2009 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 7,517.8 մլն դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2009 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 2.6 մլրդ դրամի չափով և ռադիոհաճախականության օգտագործման վճարները՝ 4.3 մլրդ դրամի չափով: Այս խմբի հաջորդ խոշոր բաղադրիչը «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց վճարն է, որը 2009 թվականի համար ծրագրվել է 1 մլն ԱՄՆ դոլար կամ 302.4 մլն դրամ: